

22. Մարաշի Տիկին Սիրանոյշ Նալչանեան՝ Մէկ կորփուրայ:

23. Կեսաբացի Տիկին Ագապի Տաքէսեան՝ Մէկ ճին ձեռագործ աւետարանի բոնիչ:

24. Զէյթունի ալբի Տիկին Մարիամ Փաշայեան՝ Մէկ խաչի բոնիչ եւ մէկ կորփուրայ:

25. Մարգուանի ալբի Տիկին Գարլօ Մարտէլէն՝ Մէկ խաչի բոնիչ:

26. Կարնեյի Տիկին Եսթեր Զիլինկերեան՝ Մէկ ինքնաձեռագործ ժիլէ ծածկոյ աւագ սեղանին:

27. Այնթապի Տիկին Նարիցա Պետրոսեան՝ Երկու ինքնաձեռագործ ծածկոյ աւագ սեղանին:

28. Օրբորդ Արուսեակ Շալվարեան Սուսանն՝ Երկու ձեռագործ կտոր Ս. Աստուածածնի Տաճարին:

29. Տիկին Ա. Պոյաճեան՝ մէկ քաղ կապոյ մետաքսէ խաչի բոնիչ, ձեռագործ Դպրոցատէ Տիկնանց Վարժարանի սանուհեաց:

30. Տիգրանեակերացի Օրբորդ Անիւ Մաւրառեան՝ Տեառնէրօյ Արուի Ս. Յարութեան պառկերին հոմար իր ձեռամբ մանր յուլունքներով բոնուած մէկ վարագոյր:

31. Քէօթաշիացի Տիկին Թագուշի Պալեան՝ Մէկ ինքնաձեռագործ սեղանի ծածկոյ Ս. Գլխաղբի:

32. Առանայի Տիկին Տիգրանուշի Քէօշկէրեան՝ երկու ինքնաձեռագործ սեղանի ծածկոյ աւագ սեղանին եւ Ս. Գլխաղբին:

Լուսարարական
ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆՆԱ

ԱՌՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՆ

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՈՐՀՈՒՐԴ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն կարգադրութեանց, որոնք մանրամասնուած են Ս. Արքուսյ Սիւն Պաշտօնաբերի ներկայ Յունուար քիւին իբր Յաւելուած հրատարակուած Կանոնագրութեան մէջ, պատէ ունինք բացուած յայտարարելու «Սրբոց Թարգմանչաց — Դուրեան Դրական Մրցանակ»ի երկրորդ երկամեակի Տարեւոյցը:

Թեեւ ճախորդ եղանակն սեղանի վրայ կան արդէն մրցանակի արժանացած եւ տրամադրելի գործեր, բայց ասիկա արդէն չենք նկատեր հրաւիրելու որ մասնակցիլ փափաքողները ամենեւ ուշը մինչեւ 1936 թուոյ Փետրուար ամսոյ վերջը, իրենց գործերը նամակաւ հանին յղել Ս. Արքուսյ Ամենապատէ Սրբազան Պատրիարք Զօր, մեկնագրեալները՝ երկուական, իսկ ձեռագիրները մէկ մէկ օրինակ: Այս երկրորդ երկամեայ եղանի համար եւս, ըստ է. յօդուածի նոյն Կանոնագրութեան, մասնակցողները ազատ կը բողոքին իրենք ընտրելու իրենց նիւրը, բաւական է որ Կանոնագրութեան է. յօդուածին մէջ նշանակուած ընդհանուր գիծերու եղանակի մէջ լինի այն:

29 Դեկտ. 1934

Ի գիմաց Ուսումնական Խորհրդոյ Ս. Արքուսյ

Ասեմարայի

Ասեմայի

ՍԵՐՈՎԷԼ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ